

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հնդկաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

ձգտելով շարունակել և ամրապնդել իրենց պատմական բարեկամությունն ու համագործակցությունը,

ցանկանալով նպաստել երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերի զարգացմանը՝ ելնելով փոխշահավետության և հավասարության սկզբունքներից,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը, համաձայն իրենց ազգային օրենսդրության և կանոնակարգերի, կխթանեն կայուն և երկարատև առևտրատնտեսական համագործակցությունը երկու երկրների միջև:

Հոդված 2

ա) Պայմանավորվող կողմերը փոխադարձաբար միմյանց կտրամադրեն առավել բարենպաստ ռեժիմ ներմուծման և արտահանման արտոնագրերի, մաքսատուրքերի և բոլոր տեսակի վճարումների ու հարկերի նկատմամբ՝ կապված ապրանքների ներմուծման, արտահանման կամ տարանցման հետ:

բ) Պայմանավորվող կողմերը միմյանց կտրամադրեն ներմուծման և արտահանման արտոնագրեր կամ թույլտվություններ, եթե իրենց կանոնակարգերի համաձայն նման արտոնագրերը (լիցենզիաները) տալիս են ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան որևէ այլ երկրի տրամադրված ռեժիմն է:

Հոդված 3

Ցանկացած առավելություն, հովանավորություն, արտոնություն կամ անձեռնմխելիություն, որը տրամադրում է Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը երրորդ երկրում արտադրված կամ վերջինիս

տարածքի համար նախատեսված արտադրանքի նկատմամբ, պետք է տրամադրվի անմիջապես և անվերապահորեն Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի տարածքում արտադրված կամ նրանց տարածք ներմուծելու համար նախատեսված համանման արտադրանքի նկատմամբ:

Հոդված 4

Վերը նշված 2-րդ և 3-րդ հոդվածների դրույթները, սակայն, չեն կիրառվի թույլտվության կամ շարունակականության նկատմամբ, եթե.

ա) առավելությունները տրամադրվել են մի Կողմի կողմից հարակից երկրներին՝ սահմանային փոխադրումները հեշտացնելու համար,

բ) ցանկացած Կողմի՝ որևէ երկրին տրամադրած առավելությունները կամ արտոնությունները գոյություն ունեն սույն Համաձայնագրի կնքման օրը կամ նման առավելությունների կամ արտոնությունների փոխարինման դեպքում՝ գոյություն ունեին մինչև 1947 թվականի ապրիլի 10-ը,

գ) ցանկացած առավելություն կամ արտոնություն, որը տրամադրվել է զարգացող երկրների միջև առևտրատնտեսական համագործակցության ընդլայնման ցանկացած սխեմայի համաձայն, որը բաց է մասնակցության համար զարգացող երկրների կողմից, և որին կառավարություններից որևէ մեկը կողմ է կամ կարող է կողմ դառնալ,

դ) առավելությունները կամ արտոնությունները, որոնք ծագել են Մաքսային միությունից և/կամ ազատ առևտրի գոտուց, որոնց որևէ երկիր կողմ է կամ կարող է դառնալ:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն և կհեշտացնեն կապերը միմյանց ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև, inter alia, պատվիրակությունների և գործարարների փոխայցելությունների, ցուցահանդեսներին և տոնավաճառներին մասնակցության և տեղեկության փոխանակման միջոցով:

Նրանք կնպաստեն օտարերկրյա առևտրային կազմակերպությունների, ընկերությունների, ձեռնարկությունների, բանկերի և այլնի մասնաձյուղերի գրասենյակների բացմանը միմյանց տարածքում՝ իրենց ներքին օրենսդրության և կանոնակարգերի համաձայն:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերը կխթանեն համագործակցությունը գիտության և տեխնոլոգիայի, բնապահպանության, տրանսպորտի, զբոսաշրջության և կապի, կադրերի վերապատրաստման և այլ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում:

Հոդված 7

Ապրանքների և ծառայությունների ներմուծումն ու արտահանումը կիրականացվի երկու երկրների ֆիզիկական և իրավաբանական անձանց փջև կնքված պայմանագրերի հիման վրա՝ միջազգային գներով՝ համաձայն իրենց օրենքների ու կանոնակարգերի և միջազգային առևտրային պրակտիկայի: Պայմանավորվող կողմերից և ոչ մեկը պատասխանատու չէ ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ նման առևտրական գործարքներից առաջացած պարտավորությունների համար:

Հոդված 8

Հայաստանի և Հնդկաստանի միջև առևտրական և ոչ առևտրական բնույթի բոլոր վճարումները կկատարվեն ազատ փոխարկելի միջազգային տարադրամով, եթե Պայմանավորվող կողմերն այլ համաձայնություն չունենան:

Հոդված 9

Երկու երկրների ֆիզիկական և իրավաբանական անձինք ազատ կլինեն փոխադարձաբար ներմուծելու և արտահանելու ապրանքներ և ծառայություններ միմյանց տարածքներից՝ առևտրի, փոխհատուցման պայմանավորվածությունների, վարձակալության և հետադարձ գնումների պայմանավորվածությունները կամ գործարար համագործակցության միջազգայնորեն ընդունված որևէ այլ ձևի հիման վրա՝ համաձայն երկու երկրների օրենքների և կանոնակարգերի:

Հոդված 10

Պայմանավորվող կողմերը կնպաստեն միմյանց միջև փոխադարձ ներդրումային և տեխնոլոգիական համագործակցությանը, *inter alia*, իրենց տարածքներում ստեղծելով համատեղ ձեռնարկություններ ինչպես տեղական, այնպես էլ երրորդ երկրի շուկաների համար:

Հոդված 11

Մի Պայմանավորվող կողմը մյուս Պայմանավորվող կողմի խնդրանքով կանցկացնի խորհրդակցություններ սույն Համաձայնագրի անխափան իրագործմանը նպաստելու, ինչպես նաև սույն Համաձայնագրի իրականացման և մեկնաբանման ընթացքում ծագած վեճերը լուծելու համար:

Հոդված 12

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի ստորագրման օրվանից և կգործի 5 տարի:

2. Սույն Համաձայնագրի ժամկետը ինքնաբերաբար կերկարաձգվի մեկ տարով, եթե Պայմանավորվող կողմերից մեկը Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտից առնվազն վեց ամիս առաջ գրավոր չհայտնի մյուս Պայմանավորվող կողմին Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր որոշման մասին: Նման դադարեցումից հետո սույն Համաձայնագրի պայմանները և դրույթները կշարունակեն կիրառվել Համաձայնագրի գործողության ժամանակ կնքված և սույն Համաձայնագրի դադարեցման ժամկետի դրությամբ դեռևս ամբողջապես չավարտված բոլոր պայմանագրերի նկատմամբ:

Հոդված 13

Սույն Համաձայնագիրը պետք է հաստատվի յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի կողմից՝ իր օրենսդրության և կանոնակարգերի համաձայն: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմը մյուս կողմին կծանուցի Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ իր օրենսդրությամբ և կանոնակարգերով պահանջվող ընթացակարգերի կատարման մասին:

Ի հաստատումն վերոնշյալի՝ ներքոստորագրյալները, պատշաճ լիազորված լինելով իրենց կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Նյու Դելի քաղաքում 1993 թվականի մարտի 11-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, հնդկերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Հանաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի մարտի 11-ից: